Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

էլ. փոստ՝ ***info@armin.am***

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՑ

Այս գրքույկը հրատարակուած է
LINCY FOUNDATION-ի
մեկնութեամբ

ԳԱՆՁԱՍԱՐ
ԱՌԱՔԱՇՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Երեւան 1995

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ՔԱՐՈԶ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ*

«Պարտէզ փակուած եւ աղբիւր կնքուած»[1]:

Աստուած, Իր ձեռքով ստեղծելով առաջին մարդուն ըստ **Իր պատկերի եւ նմանութեան**[2], նրան դրեց աստուածատունկ դրախտի վայելչութեան մէջ՝ **այն մշակելու եւ պահելու համար**[3]: Եւ զարդարելով տասներկու պարգեւներով՝ ամբողջ երկրի տէր եւ իշխան կարգեց՝ **ամէն ինչ դնելով նրա ոտքերի տակ**[4]:

Եւ Աստուծոյ կողմից Ադամին տրուած պարգեւներն էին՝ Աստուծոյ տեսութիւնը, զրուցակցութիւնը Նրա հետ, անմահութիւնը, լուսեղէն պատմուճանը, ան-

---

* Տե՛ս «Քարոզ Աստուածածնին փոխման» (Ս. Գրիգոր Տաթեւացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, գլ. ՃԼԴ, էջ 521): Ներկայացւում է որոշ յապաւումներով:

1 Երգ. Դ 12
2 Տե՛ս ԾՆ. Ա 26:
3 ԾՆ. Բ 15
4 Տե՛ս Սաղմ. Ը 7:

չարչարելի կեանքը, անծերանալի հասակը, անաշխատ դրախտի վայելչութիւնը, Աստուծոյ անմահ տունկերի մշակութիւնն ու պահպանութիւնը, Արարչի սէրը եւ գութը մարդու հանդէպ, քանի դեռ նա հնազանդ էր պատուիրանին, թագաւորութիւնը բոլոր արարածների վրայ, քահանայութիւնը եւ մարգարէութիւնը:

Այս տասներկու պարգեւներից մեզ զրկեց առաջին կոյս Եւան: Նախ՝ Աստուծոյ տեսութիւնից, քանզի այլեւս չկարողացան տեսնել Նրան: Զրուցակցութիւնից, քանզի մինչեւ Յորդանան[5] այլեւս չի ասում մարդկանց հետ Հայր Աստուծոյ խօսելու մասին: Անմահութիւնից, քանզի Տէրը վճիռ սահմանեց. «**Հող էիր եւ դէպի հող կդառնաս**»[6]: Լուսեղէն պատմուճանից, քանզի երբ ճաշակեցին պտղից, գիտեցան, որ մերկ էին, եւ ծածկուեցին: Զրկուեցին նաեւ անչարչարելի կեանքից («**Տրտմութեամբ եւ քրտինքով հաց ուտես**»[7]), անծերանալի հասակից («**Փուշ եւ տատասկ թող բուսնի քեզ**»[8]), տունկերի մշակութիւնից եւ պահպանութիւնից («**Որից պատուիրեցի քեզ չուտել, արդեօք կերա՞ր նրանից**»[9]), դրախտի վայելչութիւնից («**Հանեց նրան եւ բնակեցրեց դրախտի վայելչութեան յանդիման**»[10]), աստուածային սիրուց («**Գուցէ նա իր ձեռքը մեկնի, քաղի կենաց ծառից, ուտի եւ անմահ դառնայ**»[11]): Ադամը կորցրեց նաեւ թագաւորութիւնը («**Մարդը պատուի մէջ էր եւ չիմացաւ, հաւասարուեց անբան անասուններին**»[12]) եւ քահանայութիւնը, քանզի այլեւս չյանդգնեց իր կեանքում պատարագ մատուցել: Իսկ մարգարէութիւնը լռեց, քանզի այլեւս ոչինչ չի գրուած նրա շնորհների մասին:

Հակառակ սրան, սուրբ Կոյս Մարիամը ոչ միայն արժանացաւ Աստուծոյ տեսութեանը հեռուից[13], այլեւ ինն ամիս իր արգանդում բնակեցրեց Աստուծոյ Որդուն: Եւ վերադարձրեց Աստուծոյ խօսքը լսելու շնորհը՝ ադամորդիներիս Աստուծոյ որդիներ դարձնելով[14], ինչպէս որ սկզբում Աստուծոյ նման էինք[15]: Լուսեղէն պատմուճանի փոխարէն Քրիստոսով զգեստաւորեց[16] եւ Նրա հաւատքով վերընծայեց մեր կորցրած անմահութիւնը,

5 Այսինքն՝ մինչեւ Քրիստոսի Մկրտութեան պահը, երբ երկնքից լսուեց Հօր ձայնը. «Դա՛ է իմ սիրելի Որդին, Որն ունի իմ ամբողջ հաճութիւնը» [տե՛ս Մատթ. Գ 16-17]:

6 Ծն. Գ 19

7 Տե՛ս Ծն. Գ 17-19:

8 Ծն. Գ 17

9 Ծն. Գ 11

10 Տե՛ս Ծն. Գ 24:

11 Ծն. Գ 22

12 Սաղմ. ԽԸ 13, 21

13 Հմմտ. Սաղմ. ՃԼԷ 6, Ղուկ. Ա 35:

14 Տե՛ս Յովհ. Ա 12:

15 Տե՛ս Ծն. Ա 26:

16 Տե՛ս Գաղ. Գ 27:

ինչպէս գրուած է. «**Ով հաւատայ Ինձ, կընդունի յաւիտենական կեանքը եւ մահ չի տեսնի**»[17]: Անցաւոր կեանքի փոխարէն այն կեանքը տուեց, որտեղից **արտաքսուած են ցաւերը, տրտմութիւններն ու հեծութիւնները**[18], իսկ անծերանալի հասակի փոխարէն՝ **Քրիստոսի կատարելութեան հասակի չափը**[19]: Դրախտի վայելչութեան փոխարէն տուեց այն, **ինչ որ աչքը չտեսաւ, եւ ականջը չլսեց**[20], եւ տունկերի պահպանութեան փոխարէն պարգեւեց Սուրբ Գրքի խորհուրդների վերծանութիւնը: Վերադարձրեց Աստուծոյ սէրը մեր հանդէպ, **քանզի ոչ ոք չունի աւելի մեծ սէր, քան այն, որ իր կեանքը տայ իր բարեկամների համար**[21], ինչպէս Քրիստոս արեց, նաեւ վերահաստատեց մարդու թագաւորութիւնը երկրի վրայ, **քանզի Մարդու Որդուն են ծնրադրում բոլոր երկրայիններն ու երկնայինները**[22]: Վերընծայեց քահանայութիւնը՝ Քրիստոսի անարիւն Պատարագով՝ ըստ այնմ. «**Այս արէ՛ք Իմ յիշատակի համար**»[23], եւ մարգարէութիւնը՝ ըստ գրուածի. «**Վերջին օրերին Իմ Հոգուց պիտի հեղեմ բոլոր մարմինների վրայ, եւ ձեր որդիներն ու դուստրերը պիտի մարգարէանան**»[24]:

Այս բոլոր պարգեւները մեզ վերադարձրեց սուրբ Աստուածածինը իր Միածին Որդու կոյս եւ անապական ծնընդեամբ եւ մեր պատիւը առաւել դարձրեց Ադամի եւ հրեշտակների պատուի համեմատ: Քանզի ոչ միայն մեզ տուեց Ադամի փառքը, որ նա ունէր դրախտում, այլեւ այն, ինչ Աստուած խոստացաւ նրան՝ երկընքի արքայութիւնը: ....

Եւ այժմ սուրբ Եկեղեցին եւ հաւատացեալների հոգիներն առաւել պատուական են, քան Ադամը դրախտում: Քանզի Ադամը միւս բոլոր արարածների պէս արարուեց Աստուծոյ ձեռքով եւ խօսքով, մինչդեռ սուրբ Եկեղեցին Քրիստոսի մարդեղութեամբ, չարչարանքներով, մահուամբ եւ յարութեամբ սրբուեց: Ադամը մահուան եւ կեանքի միջասահմանում էր, իսկ հաւատացեալները, որ սրբուեցին աւազանի միջոցով, գրուեցին Կենաց գրքում: Ադամը խոստումո՛վ ունէր երկնքի արքայութիւնը, իսկ արեամբ մկրտուածները նրան խոստացուած հանգիստը իրենց վաստակով ձեռք բերեցին, ինչպէս Քրիստոսի բոլոր մարտիրոսներն ու վկաները: Ադամին Աստուած ստեղծեց Իր պատկերով եւ նմանութեամբ, իսկ մենք շնորհով եղանք

---

17 Տե՛ս Յովհ. Զ 47, Ը 51:
18 Տե՛ս Ես. ԾԱ 11:
19 Տե՛ս Եփես. Դ 13:
20 Ա Կոր. Բ 9
21 Տե՛ս Յովհ. ԺԵ 13:
22 Հմմտ. Փիլ. Բ 10:
23 Ղուկ. ԻԲ 19
24 Տե՛ս Յոլ. Բ 28:

Աստուծոյ որդիներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ[25], որով առաւել ենք նրանից:

Եւ այս մեծ պատիւն ու փառքը մեզ տուեց Աստուածածին Կոյսն իր Միածին Որդիով: Եւ ոչ միայն այս, այլեւ մեզ հրեշտակների պատուից էլ վեր բարձրացրեց[26]: Քանզի սուրբ Եկեղեցին Քրիստոսի Հարսն է եւ Նրա անդամը՝ ըստ գրուածի. «**Մարմին ենք Նրա մարմնից եւ անդամներ՝ Նրա անդամներից**»[27]. իսկ հրեշտակները Քրիստոսի ծառաներն են: Նրանք երկրպագում են մեր Գլխին եւ սպասաւորում մարդկանց, ինչպէս առաքեալն է ասում[28], իսկ մենք չենք երկրպագում ու սպասաւորում հրեշտակներին, որովհետեւ նրանք ծառայակից են մեզ[29]: Մենք հաղորդւում ենք Քրիստոսի չարչարանքներին եւ փառքին[30], իսկ նրանք՝ ոչ, քանի որ չունեն մարմին, որ չարչարւում է եւ փառաւորւում: Սուրբ Եկեղեցին առաքինութեամբ եւ ճգնութեամբ օրըստօրէ աւելացնում է իր գոյացական վարձքը[31], մինչդեռ հրեշտակներն այդ չեն կարող, այլ անփոփոխ են իրենց ունեցած պատուի մէջ:

25 Տե՛ս Յովհ. Ա 12, Հռոմ. Ը 15-17:
26 Հմմտ. Ա Պետ. Ա 12:
27 Տե՛ս Ա Կոր. ԺԲ 27:
28 Տե՛ս Եբր. Ա 14:
29 Հմմտ. Յայտ. ԻԲ 9:
30 Տե՛ս Հռոմ. Ը 17:
31 Հմմտ. Ա Պետ. Ա 6-7, Հռոմ. Ե 3-5, Յակ. Ա 2-4:

Այսպէս սուրբ Եկեղեցին առաւել բարձրացաւ երկրում, քան հրեշտակները՝ երկնքում: Եւ այս բարձրութիւնն այժմ ունենք հաւատով, մահուանից յետոյ՝ հոգով, իսկ յարութիւնից յետոյ՝ հոգով եւ մարմնով՝ երկնքում: Եւ բոլոր այս մեծամեծ բարիքների եւ անասելի պարգեւների պատճառը եղաւ Կոյս Աստուածածինը, որը ծնեց Միածին Որդուն սուրբ եւ անապական ծնունդով:

Այս մասին է ասում Սողոմոն Իմաստունը. «**Պարտէզ փակուած եւ աղբիւր կնքուած**»[32]: Եւ յայտնի է, որ այս խօսքը տարբեր իմաստներ ունի:

Նախ՝ աղբիւրը խորհրդանշում է մեր մտքի զօրութիւնը: Երբ յօժարակամ դէպի բարի գործն ենք շարժւում, այնժամ այն կնքուած, այսինքն՝ փակուած է մեր մէջ, իսկ երբ յօժար ենք լինում չար խորհրդի, մեր մտքի աղբիւրը վատնւում եւ դուրս է հոսում մեղքի փշերի մէջ ու կորչում: Իսկ պարտէզ են կոչւում մեր զանազան առաքինութիւնները՝ պահքը, աղօթքը, ողորմութիւնը եւ այլն, որոնցով հաճոյանում ենք Աստծուն եւ Նրա հրեշտակներին: Եւ այն փակուած է, որպէսզի չլինի կեղծ եւ ի ցոյց մարդկանց՝ համաձայն Քրիստոսի պատուիրանի. «**Մտի՛ր քո սենեակը, փակի՛ր քո դռները եւ ծածո՛ւկ աղօթիր, եւ քո**

32 Երգ. Դ 12

Հայրը, որ տեսնում է ծածկապէս, կհատուցի քեզ»[33]: Փակելը նաեւ այն է, որ մեր հոգում սատանայի կողմից սերմանուած մեղքի փուշը խլում, դուրս ենք նետում եւ չենք թողնում, որ այլեւս բուսնի մեզանում:

Երկրորդ՝ պարտէզ են մարմնի բարեբեր զգայութիւնները, քանզի աչքով բարին ենք տեսնում, ականջով՝ լսում, լեզուով՝ բարին խօսում եւ ձեռքով՝ բարին գործում: Պէտք է փակել սրանք չարի հանդէպ, որպէսզի սատանան բարի սերմերի վրայ որոմ չցանի, ինչպէս ասում է Տէրը. **«Երբ մարդիկ քնած էին, եկաւ թշնամին եւ որոմ ցանեց բարի սերմերի վրայ»**[34]: Իսկ աղբիւր է խոհեմութիւնը, որն անհրաժեշտ է կնքել մեր ներսում, որպէսզի այն չպղտորուի չար խորհրդով ու ապականի մեզ, ինչպէս որ պարտէզն է ապականւում, երբ պղտորւում է աղբիւրի ակունքը: Այս մասին է Քրիստոս ասում, **թէ սրտից են գալիս չարութեան, պոռնկութեան, սպանութեան ու այլ խորհուրդները եւ պղծում մարդուն**[35]:

Երրորդ՝ պարտէզում շատ խոտ ու ծաղիկ է աճում. մենք եւս պէտք է զանազան առաքինութիւններ ունենանք՝ հաւատ, յոյս, սէր, արիութիւն, արդարութիւն

[33] Տե՛ս Մատթ. Զ 6:
[34] Մատթ. ԺԳ 25
[35] Տե՛ս Մատթ. ԺԵ 19-20:

եւ այլն, որոնց աղբիւրը Սուրբ Հոգու վարդապետութիւնն է: Սրանց համար փակ ու կնիք են Օրէնքը եւ մարգարէները, որոնք չպէտք է խախտել, այլ ինչ որ պատուիրում են նրանք եւ սուրբ վարդապետները, պէտք է կատարել գործով եւ ուսուցանել, այլ ոչ թէ անկիրթ ու մտացածին բաներ խօսել ու գործել: Եւ պէտք է փակել ու կնքել, որպէսզի պարտէզի տէրը եւ նրա բարեկամները վայելեն այն, այլ ոչ թէ օտար խոզերը թաւալուեն ու տրորեն:

Չորրորդ՝ պարտէզ է Քրիստոսի սուրբ Մարմինն ու Արիւնը, որը պէտք է փակել անարժանների դէմ եւ բանալ արժանաւորների առջեւ՝ ըստ այս խօսքի. **«Մի՛ տուէք սրբութիւնը շներին»**[36]: Իսկ աղբիւր է Աստուծոյ իմաստութիւնը եւ սուրբ Աւետարանը. պէտք է սրանք կնքել հաւատացեալների մէջ եւ **մարգարիտները չգցել խոզաբարոների առաջ**[37], որոնք ոտնակոխ են անում ու արհամարհում սուրբ գիտութիւնը:

Հինգերորդ՝ փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր էր Աստուծոյ Բանի մարդեղութիւնը, քանզի ո՛չ հրեշտակները, ո՛չ էլ մարդիկ չեն կարող ճանաչել **այն խորհուրդը, որը ծածկուած էր յաւիտեան-**

[36] Մատթ. Է 6
[37] Տե՛ս Մատթ. Է 6:

ներից եւ ազգերից[38]: Իսկ փակն ու կնիքը ցոյց է տալիս, որ Օրէնքում եւ մարգարէներում այն ծածկապէս՝ օրինակներով ու նշաններով յայտնուեց, ինչպէս Մովսէսի տեսած անկէզ մորենին[39], որը նախօրինակն էր սուրբ Կոյսի, եւ հրաշագործ գաւազանը[40], որ սուրբ խաչն էր խորհրդանշում, եւ կամ Աբրահամին ցոյց տրուած խոյը՝ կախուած ծառից[41], որը նախապատկերն էր Քրիստոսի Պատարագի: Այսպէս եւ բոլոր մարգարէները օրինակով ու ծածկաբար խօսեցին:

Այժմ էլ Եկեղեցում կնքուած եւ փակուած է Քրիստոսի տնօրինութիւնը, քանզի օտարներից ու անարժաններից ծածկուած է Քրիստոսի գիտութիւնը, եւ այն զգուշօրէն ծածկուած ենք պահում մեր մէջ, քանզի գրուած է. «**Իմ խորհուրդը ինձ եւ իրայիններիս համար է**»[42]:

Վեցերորդ՝ փակուած պարտէզ է անուանում սուրբ Մարիամ Աստուածածինը, ինչպէս Եդէմ դրախտը, որ հրեղէն սրով փակուեց անբան անասուններից ու չարերից[43]: Այսպէս եւ սուրբ Կոյսն ամրացաւ ու պահուեց Սուրբ Հոգով, քանզի նրա

38 Կող. Ա 26
39 Տե՛ս Ել. Գ 2:
40 Տե՛ս Ել. Դ 3-4:
41 Տե՛ս Ծն. ԻԲ 13:
42 Տե՛ս Ես. ԻԴ 16:
43 Տե՛ս Ծն. Գ 24:

մէջ չկարողացան մուտք գործել չարի ո՛չ հոգեկան եւ ո՛չ էլ մարմնական խարդաւանքները: Եւ կնքուած աղբիւր է կոչւում, որովհետեւ ջրհոր եղաւ Կենդանի Ջրի՝ բացուած միայն Աստուծոյ Բանի համար եւ կնքուած. այսինքն՝ Բանն Աստուած իջաւ կուսական արգանդը, ծնուեց մարմնով, եւ կուսութեան նշանը անխախտելի մնաց: ....

Այս պատճառով Սողոմոնը **փակուած պարտէզ եւ կնքուած աղբիւր** է անուանում Տիրամօրը: Քանզի նա իր կեանքի ընթացքում ամբողջովին՝ հոգով, մարմնով, մտքով եւ զգայութեամբ ամրացուած էր եւ կնքուած՝ չարի հանդէպ փակ մնալով:

Եւ սակայն այս խօսքն առաւել վերաբերում է Աստուածամօր վերափոխմանը, երբ բարիքներով լի պարտէզը եւ յորդառատ շնորհների աղբիւրը փակուեց ու կնքուեց գերեզմանում:

Եւ այս է պատմութիւնը:

Սուրբ Կոյս Մարիամը Յովակիմի եւ Աննայի դուստրն էր՝ թագաւորական ցեղից. հօր կողմից՝ Դաւթի ազգից, իսկ մօր կողմից՝ Ղեւիի քահանայական ցեղից: Նա ամլութեան ծնունդ էր եւ իր ծնողներին տրուած աւետիսի զաւակը: Երեք տարեկան հասակում Մարիամին տարան սուրբ տաճար, ուր նա անբիծ աղաւնու պէս մնաց մինչեւ տասնչորս տարեկանը,

երբ յանձնուեց արդար ու պարկեշտ ծերունի Յովսէփին: Եւ երեք ամիս յետոյ Նազարէթում, Յովսէփի տանը, Գաբրիէլ հրեշտակապետը ողջոյն տուեց նրան[44]: Եւ տասնհինգ տարեկանում ծնեց մարդացեալ Աստծուն՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսին: Երեսուներեք տարի նա մնաց Փրկչի հետ: Եւ խաչի վրայ Քրիստոս Իր Մօրը յանձնեց կոյս Յովհաննէս աւետարանչին[45], որը երկիւղածութեամբ սպասաւորեց նրան տասներկու տարի: Այսպէս Տիրամօր կեանքը երկրի վրայ տեւեց վաթսուն տարի: Եւ այստեղից հաւատացեալների մէջ սահմանուած է, որ տղամարդն ամէն օր երեսունվեց ծնրադրութիւն անի ի փառս Քրիստոսի (երեսուներեքը՝ ըստ Կենարարի երկրային կեանքի տեւողութեան, եւ երեքը՝ ի Դէմս Սուրբ Երրորդութեան), իսկ կինը՝ վաթսուն՝ ի պատիւ եւ ի բարեխօսութիւն սուրբ Աստուածածնի, որ վաթսուն տարի ապրելով մարմնի մէջ՝ հոգով վերափոխուեց դէպի գերաշխարհային կայեանը՝ իր Արքայ Որդու եւ մեր Աստուծոյ արքայութիւնը:

Եւ առաքեալները պատանեցին աստուածընկալ մարմինը եւ ջահերի ու լապտերների ուղեկցութեամբ դրեցին գերեզմանի մէջ՝ Գեթսէմանիի «Ջահերի ձոր» կոչուած տեղում: Եւ վերեւից լոյսի սիւն եւ

44 Տե՛ս Ղուկ. Ա 26-35:
45 Տե՛ս Յովհ. ԺԹ 26-27:

երկնային շող էր իջել նրա վրայ, որ բոլոր տեսնողներին երեւում էր երեք օր շարունակ: Եւ այդ լոյսին էին խառնուել հրեշտակների զօրքերը, որոնք անճառելի ձայնով գովերգում, օրհնում, մեծարում եւ փառաւորում էին Տիրակիր Կոյսի մարմինը:

Եւ երրորդ օրը իր Միածին Որդու նըման յարութիւն առնելով՝ երկնառաք լոյսով եւ հրեշտակների դասերով Տիրամայրը բարձրացաւ իր Արքայ Որդու արքայութիւնը՝ անսպառ յաւիտեանում ստանալով անմահական թագաւորութիւնը, անցնելով բոլոր զգալի եւ իմանալի աշխարհների միջով ու հասնելով աստուածային խորանին՝ սրբութիւն սրբոցին, վարագոյրի ներքին կողմը, անճառելի փառքի եւ անվախճան պատուի մէջ՝ բարեխօսելու նրանց համար, ովքեր իրեն Աստուածածին են խոստովանում եւ իր Որդուն՝ ճշմարիտ Աստուած: Որպէսզի ամենասրբուհի Կոյսի բարեխօսութեամբ, որի վերափոխման յիշատակն է այսօր, մեզանից չհեռանայ Տիրոջ անբովանդակելի շնորհը: Քանզի ինչպէս որ Քրիստոս համբարձուեց աշակերտների աչքի առջեւ եւ արդարեւ մեզ հետ է բոլոր օրերում, ինչպէս եւ խոստացաւ. **«Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում»**[46], նոյնպէս եւ Իր Մայրը, համբարձուելով ու

46 Մատթ. ԻԸ 20

երկինք փոխուելով, մեզ հետ է Քրիստոսից տրուած պարգեւներով:

Սրա շնորհիւ Տիրամայրը անուամբ եւ ներգործութեամբ խաչի, եկեղեցու եւ իր սրբապատկերի մէջ է, իրեն Աստուածածին խոստովանողների հոգում, սրտում եւ շուրթերին: Ուստի ամէն տարի նոյն օրը ցնծութեամբ եւ հսկումով[47], պահքով եւ աղօթքով, օրհնութեամբ եւ հոգեւոր երգերով տօնում ենք Վերափոխումը: Ինչպէս այն օրը առաքեալների դասն էր հրեշտակներով հանդերձ համահաւաքուած, այսօր էլ մենք ենք ուղեկցում Տիրամօր վերափոխմանը՝ Աստուծոյ առատ պարգեւներից մեր մէջ ընդունելով Նրա ներողամտութիւնը, քաւութիւնը եւ մեղքերի թողութիւնը, ինչպէս նաեւ երկնաւոր Հօր որդեգրութեան պատիւը[48], եղբայրակցութիւնը Միածին Որդու հետ[49] եւ տաճարակցութիւնը Սուրբ Հոգուն[50], **որով՝ աղաղակում ենք՝ Աբբա Հայր, եւ լինում ենք ժառանգներ Աստուծոյ եւ ժառանգակիցներ Քրիստոսին**[51]:

---

47 Հսկում - նախատօնակի ցայգապաշտօն, այսինքն՝ տօնին նախորդող գիշերն արթնութեամբ եւ աղօթքով լուսացնելը:

48 Հմմտ. Հռոմ. Ը 15-17, Գաղ. Դ 6-7:

49 Հմմտ. Յովհ. Ի 17, Հռոմ. Ը 29:

50 Հմմտ. Ա Կոր. Գ 16, Զ 19, Բ Կոր. Զ 16, Եփես. Բ 21-22:

51 Տե՛ս Հռոմ. Ը 15-17:

Եւ ինչպէս Տէրը քաղցրացրեց մահուան դառնութիւնը՝ կամաւորաբար իբրեւ ուրախարար գինի ճաշակելով այն, այնպէս էլ Իր Մօրը չխնայեց մահից, այլ Իրեն մահակից ու գերեզմանակից դարձրեց նրան՝ կցորդելով Իր համբարձմանը, դարձնելով հաղորդ Իր Յարութեանը եւ ժառանգորդ Իր փառքին:

Նոյնպէս եւ մեզ համար թող Տէրը դժուարինը դիւրին դարձնի, առապարը՝ հարթ ճանապարհ: Եւ թող առանց երկիւղի ու զարհուրանքի անցնենք երկնքի ներքոյ գտնուող չար դեւերի միջով՝ հայելով մեր Տիրոջը, Տիրամօրը եւ բոլոր սուրբերին:

Այլեւ ուղղափառ հաւատով, բարի գործով, Աստուծոյ եւ մարդկանց հանդէպ մաքուր սրտով դէպի Տէրը գնանք Աստծուն հաճոյ անմոլար ընթացքով՝ բարեխօս ունենալով **կանանց մէջ օրհնեալ**[52] ամենասուրբ Աստուածածնին: Որպէսզի Աստուած խաղաղութիւն տայ աշխարհին, քրիստոնեաներին՝ միաբանութիւն, եկեղեցականներին՝ բարեկարգութիւն եւ զգաստութիւն, աշխարհականներին՝ երկիւղ եւ հնազանդութիւն, անմեղներին՝ պահպանութիւն եւ փրկութիւն, մեղաւորներին՝ դարձ եւ ապաշխարութիւն, հարուստներին՝ ներողամտութիւն եւ ողոր-

---

52 Տե՛ս Ղուկ. Ա 42:

մածութիւն աղքատների հանդէպ, նեղեալներին ու տնանկներին՝ համբերութիւն եւ ազատութիւն, գերեալներին՝ ազատ արձակում եւ խաղաղութիւն, օդին՝ բարեխառնութիւն եւ արտերին՝ պտղաբերութիւն. այլեւ ննջեցեալներին՝ հանգիստ ու ողորմութիւն՝ արժանացնելով յաւիտենական պսակի, եւ մեր երախտաւորներին՝ բազմապատիկ փոխհատուցում:

Իսկ Աստուածածին Կոյսի մեծապայծառ, ջահաւորուած տօնը տօնողներս ու երգեցողներս, այս քարոզն ընթերցողներն ու սրտի մտօք լսողները թող յիշուեն Տիրոջ կողմից: Եւ Նրա քաւութեան ու թողութեան շնորհիւ թող չյիշուեն մեր մեղքերն ու յանցանքները, որ գործեցինք այս կեանքում խորհրդով ու խօսքով, մտքով եւ գործով, հոգով ու մարմնով, եւ թող լինի մաքրութիւն ու պայծառութիւն մեր Աստուած Յիսուս Քրիստոսի ողորմութեամբ եւ գթութեամբ, Որին փառք եւ զօրութիւն եւ իշխանութիւն, պատիւ եւ երկրպագութիւն Իր Հօր եւ Ամենասուրբ Հոգու հետ յաւիտեանս յաւիտենից. ամէն: